**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2025 թվականի N45-Ա

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2025թ. հուլիսի 24-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | [signature] | — | — | — |
| Սարգսյան Աիդա | [signature] | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | — | — | — | (բացակա) |
| Պառավյան Գոհար | — | — | — | (բացակա) |
| Այվազյան Սերյոժա | [signature] | — | — | — |
| Գրիգորյան Արսեն | [signature] | — | — | — |
| Այվազյան Վրույր | [signature] | — | — | — |
| Գևորգյան Համլետ | | — | — | (բացակա) |
| Քալաշյան Վարսենիկ | [signature] | — | — | — |
| Արոյան Տիգրան | — | — | — | (բացակա) |
| Տոնոյան Արփյում | — | — | — | (բացակա) |
| Գրիգորյան Թամարա | — | — | — | (բացակա) |
| Սարգսյան Ալիկ | — | — | — | (բացակա) |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2025թ. հուլիսի 24-ի թիվ 45-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
/Զեկ. Խ. Վարդանյան/

2. Գյուլագարակ համայնքի բնակիչ Արմինե Գալստյանին դրամական աջակցություն տրամադրելու մասին:
/Զեկ. Լ. Թորոսյան/

3. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ. Մ. Մեսրոպյան/

4. Գյուլագարակ համայնքի 2025թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին
/Զեկ. Մ. Մեսրոպյան/

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2026-2028 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
/Զեկ. Մ. Մեսրոպյան/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ԹԾԿ ԼՈՒՍԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2025 թվականի N46-Ա

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյուլագարակ համայնքի ղեկավարին է դիմել Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի բնակիչ Արմինե Գալստյանը: Վերջինիս որդու՝ Ռուբիկ Գալստյանի մոտ՝ ծնված 02.01.1996թ..-ին, հայտնաբերվել է սուր լեյկոզ: Որդու առողջական խնդրի պատճառով ընտանիքը հայտնվել է կյանքի դժվարին իրավիճակում: Դրամական աջակցությունը անհրաժեշտ է բուժման ծախսերը հոգալու համար:

Հիմք ընդունելով Արմինե Գալստյանի կողմից ներկայացված 16.07.2025թ. թիվ 378 դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ հոդվածի Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է

1. Գյուլագարակ համայնքի բնակիչ՝ Արմինե Գալստյանին տրամադրել դրամական աջակցություն՝ 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | - | - | - |
| Օհանյան Ռուսլան | [signature] | - | - | - |
| Սարգսյան Արդա | [signature] | - | - | - |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | - | - | - |
| Մուրադյան Դավիթ | - | - | - | (բացակա) |
| Պառավյան Գոհար | - | - | - | (բացակա) |
| Այվազյան Սերյոժա | [signature] | - | - | - |
| Գրիգորյան Արսեն | [signature] | - | - | - |
| Այվազյան Վրույր | [signature] | - | - | - |
| Գևորգյան Համլետ | - | - | - | (բացակա) |
| Քալաշյան Վարսենիկ | [signature] | - | - | - |
| Արոյան Տիգրան | - | - | - | (բացակա) |
| Տոնոյան Արփյում | - | - | - | (բացակա) |
| Գրիգորյան Թամարա | - | - | - | (բացակա) |
| Սարգսյան Ալիկ | - | - | - | (բացակա) |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2025 թվականի N 47-Ն

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | - | - | - |
| Օհանյան Ռուսլան | [signature] | - | - | - |
| Սարգսյան Աիդա | [signature] | - | - | - |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | - | - | - |
| Մուրադյան Դավիթ | - | - | - | (բացակա) |
| Պառավյան Գոհար | - | - | - | (բացակա) |
| Այվազյան Սերյոժա | [signature] | - | - | - |
| Գրիգորյան Արսեն | [signature] | - | - | - |
| Այվազյան Վրույր | [signature] | - | - | - |
| Գևորգյան Համլետ | - | - | - | (բացակա) |
| Քալաշյան Վարսենիկ | [signature] | - | - | - |
| Արոյան Տիգրան | - | - | - | (բացակա) |
| Տոնոյան Արտյոմ | - | - | - | (բացակա) |
| Գրիգորյան Թամարա | - | - | - | (բացակա) |
| Սարգսյան Ալիկ | - | - | - | (բացակա) |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀՀ Լոռու մարզի

Գյուլագարակ համայնքի ավագանու

2024թ. հուլիսի 24-ի թիվ47Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1 .01-01-01 ապարատի նախահաշվի 4251 շենքեր և շինությունների նորոգում և կառուցում հոդվածից պակասեցնել 3 000 000 / երեք միլիոն / ՀՀ դրամ:

1. 01-06-01 ընդհանուր բնույթի ծառայություններ նախահաշվի 4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածում ավելացնել 2 000 000 /երկու միլիոն /ՀՀ դրամ :
2. 01-06-01 ընդհանուր բնույթի ծառայություններ նախահաշվի 4251 շենքեր և շինությունների նորոգում և կառուցում հոդվածում ավելացնել 1 000 000 /մեկ միլիոն /ՀՀ դրամ:
3. 10-07-01 սոցիալական հատուկ արտոնություններ նախահաշվի 4239 ընդհանուր բնույթի ծառայություններ հոդվածից 500 000 /հինգ հարյուր հազար /ՀՀ դրամ և 4241 մասնագիտական ծառայություններ հոդվածից 100 000 /մեկ հարյուր հազար / ՀՀ դրամ տեղափոխել նույն նախահաշվի 4729 այլ նպաստներ բյուջեից հոդված:
4. 01-01-01 ապարատի նախահաշվի 4236կենցաղային և հանրային սննդի ծառայություններ հոդվածից 2 000 000 /երկու միլիոն / ՀՀ դրամ տեղափոխել նույն նախահաշվի 4112 պարգևատրումներ հոդված:
5. 11-01-02 պահուստային ֆոնդի 4891 պահուստային միջոցներ հոդվածից 25 000 000 /քսանհինգ միլիոն / ՀՀ դրամ տեղափոխել ֆոնդային բյուջե, կատարել հատկացում 04-05-01 ճանապարհային տնտեսություն նախահաշիվի 5112 շենքերի և շինությունների շինարարություն հոդված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2025 թվականի N48 -Ն

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Ընդունել ի գիտություն Գյուլագարակ համայնքի 2025թ. բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | - | - | |
| Օհանյան Ռուսլան | [signature] | - | - | |
| Սարգսյան Աիդա | [signature] | - | - | |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | - | - | |
| Մուրադյան Դավիթ | - | - | - | (բացակա) |
| Պառավյան Գոհար | - | - | - | (բացակա) |
| Այվազյան Սերյոժա | [signature] | - | - | |
| Գրիգորյան Արսեն | [signature] | - | - | |
| Այվազյան Վրույր | [signature] | - | - | |
| Գևորգյան Համլետ | | - | - | (բացակա) |
| Քալաշյան Վարսենիկ | [signature] | - | - | |
| Արոյան Տիգրան | - | - | - | (բացակա) |
| Տոնոյան Արփյում | - | - | - | (բացակա) |
| Գրիգորյան Թամարա | - | - | - | (բացակա) |
| Սարգսյան Ալիկ | - | - | - | (բացակա) |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված
Գյուլագարակ համայքնի ավագանու
2025թ հուլիսի 24 -ի թիվ 48 որոշման

**ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Գյուլագարակ համայնքի 2025 թ բյուջեի երկրորդ եռամսյակի վերաբերյալ**

2025թ բյուջեի եկամտային մասում նախատեսվել են 707 220 900 դրամ եկամուտ Փաստացի հավաքագրվել է 213 648 200 դրամ եկամուտ, այսինքն՝ առաջադրանքը կատարվել է 30.2 %-ով, որից

/հազ. դրամ/

| | Եկամուտների անվանումը | նախատեսված | փաստացի | կատարման % |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 10 000. 0 | 1 922.4 | 19.2 |
| 2 | Գույքահարկ շենքերի և շինությունների | 1 000.0 | -1.9 | |
| 3 | Անշարժ գույքի հարկ | 39 139.9 | 5 471.5 | 14.0 |
| 4 | Գույքահարկ փոխադրամիջոցների | 40 051.4 | 12 963.0 | 32.4 |
| 5 | Տեղական տուրքեր | 1 750.0 | 1004.0 | 57.4 |
| 6 | Պետական տուրքեր | | | |
| 7 | Վարձակալությունից մուտքեր | | | |
| 8 | Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհներ/դոտ. և նպ.հատ./ | 360 903.9 | 180 452.0 | 50.0 |
| 9 | Պաշտոնական և ոչ պաշտոնական կապիտալ դրամաշնորհներ | 226 000.2 | 0 | |
| 10 | Տեղական վճարներ | | | |
| 11 | Այլ եկամուտներ | 28 375.5 | 11 837.2 | 41.7 |
| | Ընդամենը | 707 220.9 | 213 648.2 | 30.2 |

Համայնքի 2025թ բյուջեի ծախսային մասում նախատեսվել են 747 507 600 դրամի ծախսեր, իսկ փաստացի կատարվել է 141 188 124 դրամի ծախս, որից.

| | Ծախսերի անվանումը | Նախատեսված | փաստացի | Կատարման |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքապետարանի պահպանման ծախսեր | 186 165.2 | 75 101.9 | 4.03 |
| 2 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 50 068.3 | 19 387.0 | 38.7 |
| 3 | Գազաֆիկացիա | | | |
| 4 | Գյուղատնտեսություն | 4 944.8 | 2178.0 | 44.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Առողջապահություն | 1 935.2 | 0 | |
| 6 | Աղբահանում | 1 100.0 | 0 | |
| 7 | Ճանապարհային տրանսպորտ | 81267.5 | 6 200.0 | 7.6 |
| 8 | Ջրամատակարարում | 132 631.8 | 55 340.8 | 41.7 |
| 9 | Փողոցների լուսավորություն | 30 578.0 | 10 354.1 | 33.9 |
| 10 | Մշակույթի տներ,ակումբներ, կենտրոններ | 55 000.0 | 17 637.2 | 32.1 |
| 11 | Այլ մշակույթային կազմակերպություններ | 5 920.0 | 1 137.4 | 19.2 |
| 12 | Նախադպրոցական կրթություն | 132 150.0 | 46 365.1 | 35.1 |
| 13 | Արտադպրոցական դաստիարակություն | 21 957.8 | 12 011.0 | 54.7 |
| 14 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 800.0 | 0 | |
| 15 | Սպորտ | 1 704.0 | 914.3 | 53.7 |
| 16 | Կրոն | 500.0 | 0 | |
| 17 | Կրթություն | 800.0 | 0 | |
| 18 | Պահուստային ֆոնդ | 60 318.4 | 13 121.4 | 21.8 |
| 15 | Տնտեսական հարաբերություններ այլ դասերի չպ. | -20 000.0 | -1 877.5 | |
| 16 | Ընդհամենը | 747 507.6 | 257870.7 | 34.5 |
| | | | | |

Համայնքի ղեկավար՝ Խաչիկ Վարդանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2025 թվականի N 49-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Գյուլագարակ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | – | – | – |
| Օհանյան Ռուսլան | [signature] | – | – | – |
| Սարգսյան Աիդա | [signature] | – | – | – |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | – | – | – |
| Մուրադյան Դավիթ | – | – | – | (բացակա) |
| Պառավյան Գոհար | – | – | – | (բացակա) |
| Այվազյան Սերյոժա | [signature] | – | – | – |
| Գրիգորյան Արսեն | [signature] | – | – | – |
| Այվազյան Վրույր | – | – | [signature] | – |
| Գևորգյան Համլետ | – | – | – | (բացակա) |
| Քալաշյան Վարսենիկ | – | – | [signature] | – |
| Արոյան Տիգրան | – | – | – | (բացակա) |
| Տոնոյան Արփյում | – | – | – | (բացակա) |
| Գրիգորյան Թամարա | – | – | – | (բացակա) |
| Սարգսյան Ալիկ | – | – | – | (բացակա) |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/

## Ներածություն

Գյուլագարակ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը(այսուհետև՝ ՄԺԾԾ) համայնքի առաջիկա երեք տարիների զարգացման ռազմավարական ֆինանսական փաստաթուղթ է, որը հիմք է հանդիսանալու ինչպես համայնքի զարգացման հնգամյա ծրագրի, այնպես էլ համայնքի 2025թվականի տարեկան բյուջեի կազմման համար:

ՄԺԾԾ-ն կազմվել է հիմք ընդունելով ինչպես համայնքի զարգացման հիմնախնդիրները, համայնքի հնգամյա ծրագրի, սոցիալ-տնտեսական և այլ ենթադրությունների վերաբերյալ, որոնց հիման վրա պատրաստվել են կանխատեսումները, դրանց կաևոր հիմնավորմամբ,այնպես էլ ՀՀ կառավարության ծրագրերով որդեգրված առաջնահերթ ուղղությունները, որոնք արտացոլված են վերջին տարիներին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված գերակայություններում:

2026-2028 թվականների միջնաժամկետ հատվածում Գյուլագարակ համայնքի տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններն են.

- **Գյուղատնտեսության բնագավառում**
  -Իրականացնել աշխատանքներ՝ նվազագույնի հասցնելու անմշակ վարելահողերի քանակը, զարգացնել անասնապահությունն ու մեղվաբուծությունն:
  -Ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկա
- **Ճանապարհաշինության բնագավառում**
  -Շարունակել ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները:
  -Սալարկում
- **Քաղաքաշինության բնագավառում**
  -Իրականացնել լուսավորության ներքին ցանցի ընդլայնման աշխատանքներ համայնքի բոլոր բնակավայրերում:
  - Երկու բնակավայրերում, որտեղ կա խմելու ջրի մատակարարման խնդիր, ապահովվել շուրջօրյա ջրով:
  -Իրականացնել բոլոր բնակավայրերում գերեզմանատների ցանկապատում,
  -Համայնքի բոլոր բնակավայրերում կառուցել և բարեկարգել հասարակական տրանսպորտի կանգառները:
- **Շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում**
  -Բոլոր բնակավայրերում ավելացնել աղբահավաքման պարբերականությունը,
  -Ավելացնել բնակավայրերում տեղադրված աղբարկղերի թիվը:
- **Կրթության բնագավառում**
  -Նախադպրոցական կրթության զարգացման համար Ամրակից և Հոբարձի բնակավայրերի մանկապարտեզների շենքերի վերանորոգում: Համայնքի բոլոր բնակավայրերի շահառուների համար հասանելի դարձնել նախադպրոցական կրթությունը,
  -Աջակցել համայնքում գործող դպրոցներին:
- **Սոցիալ-մշակութային ոլորտներում**
  _ շահագործման հանձնել նորակառույց արվեստի դպրոցը
  -Վերազինել մշակութային հաստատությունները, ստեղծել և ֆինանսավորել սպորտային և գեղարվեստի խմբեր,
  -աջակցել համայնքում գործող բուժհաստատություններին,

-աջակցել համայնքի ակտիվ երիտասարդների կողմից իրականացվող տարբեր երիտասարդական, մշակութային, ժամանցային, մարզական ծրագրերի իարականացմանը,
-սոցիալական ապահովության բնագավառում շարունակել առանձնակի ուշադրության կենտրոնում պահել անապահով ընտանիքներին, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանվածության խնդիրներին:

- **Համայնքային կառավարման ոլորտում**

- համայնքապետարանում ստեղծված քաղաքացիների սպասարկման գրասենյակում առավել արդյունավետ դարձնելով քաղաքացիների սպասարկումը,
-իրականացնել համայնքային ծառայության կատարելագործման, տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումներ, վերապատրաստումների միջոցով նպաստել ծառայող անձնակազմի կարողությունների զարգացմանը,բոլոր բնակավայրերի վարչական շենքերի վերանորոգում:

**ՄԱՍ 1. Գյուլագարակ համայնքի բյուջեի եկամուտները**

Գյուլագարակ համայնքի եկամուտների գոյացման աղբյուրները բաժանվում են երկու խմբի՝ սեփական եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ:
2024 թվականի Գյուլագարակ համայնքի վարչական բյուջե մուտքագրված 427 035 500 ՀՀ դրամ եկամուտներից 110 291 300 ՀՀ դրամ բաժին է ընկել սեփական եկամուտներին, իսկ 316 744 200 ՀՀ դրամը՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրված դոտացիայի գումարն է:
**Վարչական բյուջեի** սեփական եկամուտներում ամենախոշոր մասը բաժին է ընկել փոխադրամիջոցների գույքահարկին՝ 36 146 000 ՀՀ դրամ:
Մնացած եկամուտների պատկերը հետևյալն է.
-անշարժ գույքի հարկ – 34 260 800 ՀՀ դրամ
-տեղական տուրքեր -2 400 000 ՀՀ դրամ
-տեղական վճարներ-10 455 900 ՀՀ դրամ
-վարձակալական վճարներ-9 828 600 ՀՀ դրամ
**Ֆոնդային բյուջեի** եկամուտները գոյացել են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող մասհանումների և պետական բյուջեից ստացված սուբվենցիաների հաշվին:
Գյուլագարակի համայնքապետարանի 2026-2028 թվականների ՄԺԾԾ-ի կազմման հիմքում ընկած է ինչպես նախորդ տարիների բյուջեի մուտքերի վերլուծությունը, այնպես էլ տարբեր նորմատիվ իրավական ակտերով սահմանված համայնքի բյուջեին ամրագրված եկամուտների դրույքաչափերը և դրանցում կատարված փոփոխությունները:
Մասնավորապես պլանավորման ժամանակ հաշվի են առնվել.

- **Անշարժ գույքի հարկի մասով**

ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված անշարժ գույքի հարկի դրույքաչափերը՝ հաշվի առնելով նաև, որ օրենսգրքի 233-րդ հոդվածի համաձայն 2021-2026 թվականների համար անշարժ գույքի հարկը(բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և ՀՀ հարկային օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2023 թվականի համար՝ 30տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 35 տոկոսի չափով, 2025թվականի հաշվետու տարվա համար՝ 50 տոկոսի չափով, 2026 թվականի հաշվետու տարիների համար՝ 100 տոկոսի չափով:

Այս հարկատեսակի գծով եկամուտների պլանավորման ժամանակ հաշվի են առնվել նաև հողի հարկի և անշարժ գույքի հարկի գծով կուտակված ապառքների գումարները և դրանց գանձման դինամիկան:

Այս հարկատեսակի գծով ըստ տարիների նախատեսվել են հետևյալ եկամուտները

2026 թվականին- 53 000 000 ՀՀդրամ

2027 թվականին- 60 500 000 ՀՀ դրամ

2028թվականին 60 500 000 ՀՀ դրամ ճիշտ է գրված

- **Փոխադրամիջոցների գույքահարկի մասով.**

  Այս հարկատեսակի գծով եկամուտների պլանավորման ժամանակ հաշվի է առնվել համայնքապետարանի համակարչային բազայում գրանցված փոխադրամիջոցների գծով ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով և դրույքաչափերով հաշվարկված հարկի գումարները, ինչպես նաև կուտակված ապառքների գումարները և դրանց գանձման դինամիկան:

- **Տեղական տուրքերի վճարների մասով**

  Տեղական տուրքերի և վճարների գումարների պլանավորումը իրականացվել է հաշվի առնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին»ՀՀ օրենքով սահմանված գործողությունների և ծառայությունների համար Գյուլագարակ համայնքի ավագանու 2024թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 123-Ն որոշմամբ սահմանված դրույքաչափերը:

- **Վարձակալական վճարների մասով**

  Այս վճարի պլանավորումը իրականացվել է իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքված հողի և անշարժ գույքի վարձակալության պայմանագրերով սահմանված վարձակալական վճարների տարեկան հաշվարկի գումարների համաձայն:

- **Այլ եկամուտների մասով**

  Այլ եկամուտների մուտքերը հիմնականում գոյանում են համայնքի սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական և այլ տեխնիկայով մատուցված ծառայությունների համար համայնքի բյուջե մուտքագրվող գումարներից: Այլ ծառայությունների համար վճարների սակագները սահմանված են Գյուլագարակ համայնքի ավագանու 06,12,2023 թվականի թիվ 84-Ա որոշմամբ:

  Ստորև ներկայացվում է ըստ եկամտի տեսակների 2024-2028թթ. համար եկամուտների կանխատեսումները՝2024 թվականի փաստացի և 2025 թվականի հաստատված բյուջեների ցուցանիշների հետ համեմատական վերլուծությամբ(աղյուսակ 1) համայնքի բյուջեի մուտքերի գծով ապառքների կառուցվածքը(աղյուսակ 2):

Աղյուսակ 1

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

| Հ/Հ | ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2024թ. Փաստ. | 2025թ. Հաստ | 2026թ. | 2027թ. | 2028թ. | Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | 2024 թ | 2025 թ | 2026 թ | 2027 թ | 2028 թ |
| | **Ընդամենը մուտքերը** | **627035.5** | **707220.9** | **718168.2** | **882326.0** | **882326.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |
| 1 | Անշարժ գույքի հարկ | 45260.8 | 50139.9 | 53000,0 | 60500.0 | 60500.0 | 7.2 | 7.1 | 7.4 | 6.9 | 6.9 |
| 2 | Փոխադրամիջոցների գույքահարկ | 36146,0 | 40051,4 | 44000,0 | 35276.0 | 35276.0 | 5.8 | 5.7 | 6.1 | 4.0 | 4.0 |
| 3 | Տուրքեր | 2400,0 | 1750.0 | 2755.0 | 2750.0 | 2750.0 | 0.4 | 0.2 | 0.4 | 0.3 | 0,3 |
| 4 | Պաշտոնական դրամաշնորհներ | 516744,2 | 586904,1 | 585000,0 | 761000.0 | 761000.0 | 82.4 | 83 | 81.5 | 86.2 | 86.2 |
| 5 | Այլ եկամուտներ | 26484,5 | 28375,5 | 33413,2 | 22800.0 | 22800.0 | 4.2 | 4.0 | 4.7 | 2.6 | 2.6 |
| 6 | Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 7 | Հավելուրդ/պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 8 | **ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ** | **627035.5** | **707220.9** | **718168.2** | **529607.1** | **529607.1** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |

Աղյուսակ 2

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԳԾՈՎ ԱՊԱՌՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

| h/h | Մուտքի անվանում | առ 01.01.2023 | Առ 01.01.2024 | առ 01.01.2025 | 2024թ 2023թ նկատ.% | 2025թ 2024թ նկատ.% |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 81859.0 | 72651.2 | 66809.7 | 88.8 | 92.0 |
| 2 | Շենք,շինության գույքահարկ | 1173.1 | 1000.0 | 1000.0 | 85.2 | 100 |
| 3 | Անշարժ գույքի հարկ | 34160.0 | 36744.8 | 40817.4 | 107.6 | 111.1 |
| 4 | Փոխադրամիջոցների գույքահարկ | 35248.4 | 37743.3 | 42985.6 | 107.1 | 113.9 |
| 5 | Վարձակալական վճար | 1047,2 | 1047.2 | 1047,2 | 100 | 100 |
| | Ընդամենը ապառքեր | 153487.7 | 149186.5 | 152659.9 | 97.2 | 102.3 |

## ՄԱՍ 2. Գյուլագարակ համայնքի բյուջեի ծախսերը

Գյուլագարակ համայնքի 2026-2028 թվականների ծախսերի պլանավորման հիմքում, դրված են այն հիմնախնդիրները, որոնց լուծման առաջնահերթությունները ամրագրված են համայնքի զարգացման տեսլականում:
Քանի որ Գյուլագարակ համայնքը կազմված է միայն գյուղական բնակավայրերից, համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, որի զարգացումից է հիմնականում կախված բնակչության : Այդ նպատակին հասնելու համար նախատեսվում է տրակտորային պարկի ստեղծում ժամանակակից գյուղտեխնիկայով: Ըստ հնգամյա ծրագրի բյուջեն կազմում է 315 000 000 ՀՀ դրամ: Նախատեսվում է նաև արոտավայրերի և անասնապահության խթանման ծրագիր, որի համար նախատեսվում է 6 000 000 ՀՀ դրամ

Նախորդ տարիների ընթացքում համայնքային բյուջեի հաշվին ձեռք են բերվել JCB, կամազ, աղբատար մեքենա, որոնցով վճարովի ծառայություններ են մատուցվում ինչպես համայնքի, այնպես էլ հարակից բնակավայրերի բնակիչներին:
Գյուլագարակ համայնքի զարգացման գերակայություններից է նաև ներհամայնքային ճանապարհների կառուցումը և գիշերային լուսավորության ցանցի ընդլայնումը: Այդ նպատակով նախորդ տարիներին իրականացված սուբվենցիոն ծրագրերի միջոցով կատարվել են ներհամայնքային ճանապարհների կառուցման և նորոգման աշխատանքներ բոլոր բնակավայրերում: Սուբվենցիոն ծրագրերով բոլոր բնակավայրերում կատարվել են նաև լուսավորության ցանցի ընդլայման աշխատանքներ: 2025թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերով նույպես կատարվում են ճանապարհաշինության և գիշերային լուսավորության ցանցի ընդլայման աշխատանքներ համայնքի բնակավայրերում:
2026-2028 թվականներին ևս նախատեսվում են ներդրումներ կատարել վերը նշված բնագավառներում հետևյալ չափերով.

- 2025 թվականին՝ գիշերային լուսավորության ցանցի ընդլայման գծով ,որի համար նախատեսվում է 86.500 ՀՀ դրամ,
- 2025 թվականին նախատեսվել է ճանապարհաշինության գծով - 97856,0ՀՀ դրամ

2025 թվականին սուբվենցիոն ծրագրով նախատեսվում է ներդրումներ իրականացնել նախադպրոցական կրթության զարգացման համար: 2024 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերով կատարվում են երկու բնակավայրում մանկապարտեզների շենքերի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ:
2025-2027թթ նախատեսվում է Գարգառ գետի էկո համակարգի վերականգնումը, որի արդյունքում կբարելավվի սանիտարահիգենիկ միջավայրը, կմաքրվի Գարգառ գետը ամբողջ երկայնքով, որի համար նախատեսվում է 335 000 000 ՀՀ դրամ:
Նախատեսվում է «Ջուր Գարգառին և Պուշկինոյին» ծրագիրը, որի արդյունքում Գարգառ և Պուշկինո բնակավայրերի բնակիչները կապահովվեն խմելու ջրով, նախատեսվում է 33 500 000 ՀՀ դրամ:

2025-2026թթ նախատեսվում համայնքի տարածքում գտնվող եկեղեցիների վերանորոգման ծրագիր, որի համար նախատեսվում է 2 200 000 ՀՀ դրամ:

2024-2026 թվականների համայնքային բյուջեից միջոցներ կհատկացվեն նաև մշակույթի և սպորտի զարգացման համար: 2025 թվականին նախատեսվում է համայնքային սպորտդպրոցի կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը 185 000 000ՀՀ դրամ է:

Ստորև ներկայացվում է 2024-2028 թվականների համար նախատեսված ծախսերը՝ տնտեսագիտական և գործառնական դասակարգմամբ՝ 2024 թվականի փաստացի և 2025 թվականի հաստատված բյուջեների ցուցանիշների հետ համեմատական վերլուծությամբ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ա)ըստ գործառնական դասակարգման

| Հ/Հ | ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2024թ. փաստ | 2025թ. հաստ | 2026թ. կանխ | 2027թ. կանխ | 2028թ. | Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | 2024թ. | 2025թ. | 2026թ | 2027 թ. | 2028 թ |
| | Ընդամենը ծախսեր | 697938.0 | 747507.6 | 734168.2 | 897326.0 | 897326.0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 170125.6 | 237733.5 | 245815.0 | 274026.0 | 274026.0 | 24.4 | 27.0 | 32.4 | 29.6 | 29,6 |
| 2 | Պաշտպանություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3 | Հասարարական կարգ, անվտանգություն դատական գործունեություն | 0 | 0 | 0.0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 4 | Տնտեսական հարաբերություններ | 47580.0 | 72072.3 | 167300.0 | 180850.0 | 180850.0 | 6.8 | 20.2 | 22.9 | 20.2 | 20.2 |
| 5 | Շրջակա միջավայր | 1075.0 | 5648.0 | 2200,0 | 5000.0 | 5000.0 | 0.15 | 0.3 | 0.3 | 0.6 | 0.6 |
| 6 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 95000.0 | 163209.8 | 60500 | 194000.0 | 194000.0 | 13.67 | 16.1 | 8.2 | 21.6 | 21.6 |
| 7 | Առողջապահություն | 500.0 | 1935.2 | 1500.0 | 500.0 | 500.0 | 0.08 | 0.1 | 0.2 | 0.1 | 0.1 |
| 8 | Հանգիստ,մշակույթ և կրոն | 47502.5 | 640074,3 | 89853.2 | 145950.0 | 145950.0 | 6.8 | 7.3 | 12.2 | 16.2 | 16.2 |
| 9 | Կրթություն | 197747.0 | 154907,8 | 175000.0 | 110000.0 | 110000.0 | 28.3 | 26.3 | 22.6 | 11.2 | 11.2 |
| 10 | Սոցիալական պաշտպանություն | 8500.0 | 800.0 | 1000.0 | 1000.0 | 1000.0 | 1.2 | 1.1 | 1.2 | 1.0 | 1.0 |
| 11 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | 129907.9 | 47197.0 | 0 | -5000.0 | -5000.0 | 18.6 | 1.4 | 0 | -0.5 | -0.5 |

բ)ըստ տնտեսագիտական դասակարգման

| Հ/Հ | ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2024թ. փաստ | 2025թ. հաստ | 2026թ. կանխ | 2027թ. կանխ | 2028թ. կանխ | Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | 2024թ. | 2025թ. | 2026թ | 2027թ. | 2028թ. |
| | Ընդամենը ծախսեր | 697938.0 | 747507.6 | 734168.2 | 897326.0 | 897326.0 | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Ա | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ | 447038.0 | 483655.8 | 734168.2 | 897326.0 | 897326.0 | 64.1 | 100 | 100 | 100 | 100 |
| 1 | Աշխատանքի վարձատրություն | 81673,6 | 119050.0 | 130500.0 | 132476.0 | 132476.0 | 17.2 | 14.4 | 18.1 | 14.7 | 14.7 |
| 2 | Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում | 46540.0 | 107936.2 | 362933.2 | 318550.0 | 318550.0 | 6.7 | 44.4 | 17.3 | 35.5 | 35.5 |
| 3 | Տոկոսավճարներ | 0 | 0 | | | 0 | | | | | |
| 4 | Սուբսիդիաներ | 0 | 0 | | | | | | | | |
| 5 | Դրամաշնորհներ | 135849.5 | 188891.2 | 226000.0 | 433000.0 | 433000.0 | 19.5 | 39.7 | 30.0 | 48.2 | 48.2 |
| 6 | Սոցիալական նպաստներ թոշակներ | 8500.0 | 8000.0 | 0 | 0 | 0 | 1.2 | 1.1 | 1.7 | 1.0 | 1.0 |
| 7 | Այլ ծախսեր | 136432.9 | 67778.4 | 5735.0 | 4300.0 | 4300.0 | 19.5 | 0.8 | 3.9 | 0.5 | 0.5 |
| Բ | Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր | 250900.0 | 283851.8 | 0 | 0 | 0 | 35.9 | 0 | 0 | 0 | 0 |
| 1 | Հիմնական միջոցներ | 250900.0 | 283851.8 | 0 | 0 | 0 | 35.9 | 0 | 0 | 0 | 0 |
| 2 | պաշարներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3 | Բարձրարժեք ակտիվներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 4 | Չարտադրված ակտիվներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Գ | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 1 | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2 | Պաշարների իրացումից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3 | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 4 | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

Գյուղագարակ համայնքի ղեկավար՝ Խաչիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

գ. Գյուղագարակ